

Ստեփանոս Ռոշքա, որ ժամանակագրութիւն մը գրած է մինչեւ 1739 տարին, 1631 տարին կը գրէ. «Յովհաննէս Վարդապետն Պատրիարքն Կ.Պոլսոյ անցանէ ընդ Լեհաստան ի մեծն Հռոմ, եւ անդէն զուխտն իւր եւ զհնազանդութիւն կատարեալ, թողու Դպրատանն մերում յիշատակ զՊատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ յամն Տեառն 1236, զորոյ օրինակն առ իսառի:» (Սկզբնագիր Վիենն. Մխիթ. Մտղրն. տ. Տաշեան, էջ 679: Պալաքեան, Աթոռ Ս. Պետրոսի, Վիեննա 1853, էջ 271, ծան. 2:) Ուրիշ կողմանէ ունիմ շատ ստոյգ վկայութիւններ, որ Յովհ. Խուլ 1631 եւ 32ին Լեմպերկ կը գտնուէր:

Հռոմ Բրորականտայի Դիւանին մէջ կը պահուի «Պատմութիւն Վարդանայ եռամեծի Սոփեստի:» Ասոր առաջին Յիշատակարանին մէջ կը կարդանք. «Փառք... Յամի եաւթն հարիւրորդի Ի երորդի երրորդի թուաբերութեանս Հայոց (= 1274 Վարդանայ հեղինակութեան թուական). այսչափ գրած առաջի յիշատակարան եւ ոչ աւելի, ո՛հ զի խիստ ծեր էր աւրինակս, հազիւ կարացի յանկ հանել:» Իսկ երկրորդ Յիշատակարանն է՝ «Եւ ես Յովհաննէս Վարդապետս Կ.Պոլսոյ Պատրիարգ անուամբ ի Հռոմ գնալս պատահեցայ ի Լով քաղաքն, տեսի զՎարդան վ.ի պատմագիրն զի խիստ հնացեալ էր, վասն եգի աւրինակ եւ գրեցի զգիրս անմեղադիր լերուք ծերութեան ժամանակիս գիրս է եւ այս եղեւ թվ. Ռ.2 (= 1631)